մարդոյ եթէ ամուսնացեալ և եթէ յազգականութեամբ ընդ այրս ոչ ոք կին և դուստր մի մտցէ 'ի տունն այնմ, բայց մայր և քեռ բնակողին տանն այրն յայնմիկ, բայց 'ի տօնի հանդիսի որում կարող են մտանել բազմութեամբ 'ի միասին։

ԳԼՈՒԽ ՃԶԴ.

Ոչ ոք այր և կամ կին յանդգնելով ոչ մտցէ 'ի տունն այլոց առանց ընդունելութեան Տեառն տանն յայնմիկ։

ԳԼՈՒԽ ՃԶԵ.

Ոչ ոք պաշտօնեայ որ ոք յիշխանի որ իցէ ոչ կարէ խորտակել դրունս և մտանել տուն այլոց, եթէ արդարոց և եթէ մեղաւորաց և կալանաւոր առնել մեղաւորն, բայց եթէ դուռն բաց գտցէ կարող է մտանել ըմբռնել մեղաւորն ըստ հրամանի Տեառն իւրոյ։

ԳԼՈՒԽ ՃԶԶ.

Ձեռ պաշտօնէի իշխանին հրամանաւ իշխանութենէ Տեառն իւրոյ շօշափելով 'ի վերայ ում ոք որ իցէ իսկոյն նա կապեալ է և պարտ է նմայ հնազանդաբար երթալ զհետ պաշտօնատարին ուր և հրամայիցէ պաշտօնատարն։